ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Դավիթ Գյուրջինյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ ԿԳՆ Լեզվի կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Վրաստան, Թբիլիսի, 2019 թ. ապրիլի 9-11

4. Հրավիրող կողմը

«Կամուրջ» գրական-մշակութային հասարակական կազմակերպություն

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Անահիտ Բոստանջյանի անվան մրցանակաբաշխությանը, լավագույն շարադրության հաղթողի որոշում և պարգևի հանձնում

6. Քննարկված թեմաները

Հայոց լեզվի պահպանման և տարածման, հայալեզու կրթության խնդիրները Վրաստանում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նախապես չծրագրված մի շարք հանդիպումներ եմ ունեցել:
ա) Թբիլիսիի հ. 104 հայկական դպրոցի աշակերտների և ուսուցիչների հետ: Աշակերտների հետ խոսել եմ հայերեն կարդալու և հաղորդակցվելու, հայերենն

ամրապնդելու, կատարելագործելու մասին: Ուսուցիչների հետ քննարկել ենք հայկական դպրոցների հիմնախնդիրները, ինչպես նաև խոսել մանկավարժամեթոդական մի շարք հարցերի, հայագիտական և բնագիտական համահայկական օլիմպիադաներին Թբիլիսիի հայկական դպրոցի աշակերտների մասնակցության մասին:
բ) Հայարտանը (Հայ արվեստի տուն) նախակրթարանում հայ մանուկների և նրանց ծնողների հետ, ելույթ եմ ունեցել մայրենի լեզվի իմացության և հայալեզու կրթության ու դաստիարակության կարևորության մասին:
գ) Վրաստանի Հանրապետության կառավարությունում լեզվի պետական դեպարտամենտի նախագահ Գեորգի Ալիբեգաշվիլու հետ քննարկվել են երկու երկրների պետական լեզվական քաղաքականության առանձնահատկությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

ա) Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել համագործակցությունը Վրաստանի հայ համայնքի, հայկական կրթական և մշակութային հաստատությունների հետ:
բ) Ցանկություն արտահայտվեց գործակցություն սկսել Հայաստանի և Վրաստանի լեզվի ոլորտը տնօրինող պետական կառույցների միջև:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Հայկական դպրոցի ուսուցիչներն առաջարկեցին ստեղծել հայրենիքից դուրս ապրող հայերի համար հատուկ գրված դասագրքեր և ձեռնարկներ:

15.04. 2019